գործէին Տաճկին. նաեւ զթօփերն ի ձեռաց
իւրեանց խլէին: 45

Իսկ մի փաշայ ոմն Խարխաշանուն, որ էր
Շամայ եկեալ հինգհարիւր հոգով. սա եկեալ
առ Օսմանն եւ ասէ. Զի՞նչ է կամուրն եւ զի՞նչ
լինի կռիւ նորա. տուր ինձ հրաման. ես իմ
զօրքս գնացից եւ զամենեսեան կենդանի ածից 50
առ քեզ. եւ զթապօրն ցրուեցից: Եւ նա ասէ.
Գնա՛, տեսնամ զքեզ: Իսկ եղկելին վստահա-
ցեալ անձին զօրութիւնն եւ ոչ յԱստուած. եւ
մինչ գնայր զառ ի վեր տափարակին, յորում
կային անտառախիտ ծառք, ուր էին թաղու- 55
ցեալ Խազախք: Մի ոմն ի նոցանէ տեսեալ թէ
զայ փաշան այնպէս վստահ եւ գիտաց թէ
նա է գլուխն. նշան եդիր ի վերայ նորա
զթուփքն իբրեւ ի նպատակ. եւ հարեալ ի
ճակատն սաղաւարտիւ անցուց զկուլան ի միւս 60
կողմն, որպէս Դաւիթ զԳողիաթ. որ եւ ի վայր
անկեալ ձիուն՝ սատակեցաւ: Եւ յանկարծակի
ելեալ ի թփոյն Խազախք՝ ամենայն կողմանց
պատեցին շուրջանակի զՇամայ խուլն, կո-
տորեցին անխնայ. սակաւք միացեալ փա- 65
խըստեամբ՝ գնացին պատմել Օսմանին: Եւ նա
բարկացեալ հրամայեաց թաթարաց մտանել
երկիրն Լէհու. զոր անթիւ բազմութեամբ
իբրեւ մարախ տարածեալ դային եւ ոչ գի-
տէին զորոգայթք վնասուց. զոր թոյլ ետուն
մտանել ի ներս. ապա կալեալ զյառաջս եւ զյե-
տոյս նոցա՝ սրախողող արարեալ. զայլս թո-

47 չամա: — 52 գնայ: — 54 որում: — 64 զչամա: